ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/10

ք. Երևան «10» 10 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Նաիրի Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Փոքրիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 7500000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենքդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք

հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:սկիզբ

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 | ք. Գավառ, Բռշնաղյան 1 նրբ. Տուն 8 |
| Կառավարական տուն 2, | «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Գավառ մ/ճ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | Հ/Հ 16021021339500 |
| գործառնական վարչություն | ՀՎՀՀ 08419558 |
| Հ/Հ 900011027977 | |
| ՀՎՀՀ 02698732 | |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| ---------- Ն. Հարությունյան | ---------- Գ. Փոքրիկյան |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված N 1
«10» «10» 2019թ. կնքված
ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/10 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| | | Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը* |
| 1 | 71241200/3 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | Նախատեսվում է իրականացնել ներքոնշյալ կրթական օբյեկտների հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն ներքոնշված եկարագրի | դրամ | 7500000 | 1 | Ըստ օբյեկտների | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2019 թ. |
| | | | «Երևանի Հենրիկ Խաչատրյանի անվան հ. 199 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. | |
| | | | «Երևանի Մ. Մարբանի անվան հ. 86 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | Երևան, Բագրատունյաց 45 | |
| | | | «Երևանի Ստեփան Շահումյանի անվան հ. 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | Երևան, Մաշտոցի պող. 33 | |
| | | | «Երևանի հ. 136 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | Երևան, Լեփսիուսի 6 | |
| | | | «Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան հ. 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | Երևան, Հովսեփ-Էմինի 8 | |
| | | | «Երևանի Հ. Օշականի անվան հ. 172 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | Երևան, Մ. Բաղրամյան պող. 59ա | |
| | | | «Երևանի Ղ. Աղայանի անվան հ. 63 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | Երևան, Կիևյան 9 | |
| | | | «Երևանի Ռ. Սևակի անվան հ. 151 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | Երևան, Բաբայան 40 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | «Երևանի Վ. Վաղարշյանի անվան հ. 80 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | Երևան, Ծովակալ-Իսակովի 2/1 | |
| | | | «Երևանի հ. 163 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | Երևան, Նոր-Նորքի 6-րդ գ., Գյուրջյան 13 | |
| | | | «Երևանի հ. 156 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | Երևան, Շիրազի 11 | |
| | | | «Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնաձոր համայնքի Բարիկավան 3/1 | |
| | | | «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Սյունիքի մարզ, գ. Սպանդարյան 3-րդ փողոց, շենք 23 | |
| | | | «Ա. Սարգսյանի անվան Տեղի N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տեղ, Սիրան Բարխուդարյանի անվան փողոց 7 | |
| | | | «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Բաբաթաթում 2-1 | |
| | | | «Եղվարդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Սյունիքի մարզ, գ. Եղվարդ | |
| | | | «Սիսիանի N 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Նար-Դոսի 1 | |
| | | | «Սիսիանի հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Շիրվանզադե 7 | |
| | | | «Սիսիանի հ. 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Կամոյի 3 | |
| | | | «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Շահումյան 20 | |
| | | | «Արմավիրի հ. 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Աբովյան 182 | |
| | | | «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան հ. 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Հանրապետության 20 | |
| | | | «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Սպարապետ Վազգեն Սարգսյան փող., 7/7 շենք | |
| | | | «Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Արագած զանգված, 18 շենք | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | «Սարդարապատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Արմավիրի մարզ, գ. Սարդարապատ, Աբովյան 22 | |
| | | | «Արենիի պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ | | | | ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Արենի | |
| | | | «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Շատին | |
| | | | «Վայքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Վայք, Ալավերդյան 17 | |
| | | | «Զառիթափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Զառիթափ | |
| | | | «Սպիտակի Անանիա Շիրակացու անվան N 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | | ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Երևանյան խճ. 1 | |

| Հ/Հ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ | |
|---|---|---|
| | անվանումը | համառոտ բնութագիրը |
| 1 | Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում | **Վերոնշյալ բոլոր կրթական օբյեկտներում նախատեսվում են իրականացնել.**<br>**- Թեքահարթակների կառուցում**<br>**- Բռնաձողերի տեղադրում**<br>**- Սան. հանգույցների նորոգում և հարմարեցում**<br>**- Դասասենյակների նորոգում** |
| 2 | Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ | **Հիմնավորում՝**<br>- ՀՀ կառ.04.07.2019 թ «ՀՀ 2019թ պետական բյուջեում և ՀՀ կառ.2018 թ դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որ.մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» թիվ 877-Ն որոշում<br>**Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր (ելակետային տվյալներ)՝**<br>- ճարտարապետահատակագծային առաջադրանք և տեխնիկական պայմաններ,<br>- տեխնիկական վիճակի մասին եզրակացություն,<br>- արտաքին հաղորդակցուղիների տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացություն,<br>- նախագծային առաջադրանք,<br>- հանույթ,<br>- չափագրություններ,<br>**Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝**<br>- ՀՀ կառավարության 19.03.2015 թ. թիվ 596-Ն որ. «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի «ՀՀՇՆ 30-01-2014 <«Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N263-Ն հրաման,<br>- ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001 թ N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին», ՀՀ քաղշին նախարարի հրաման 24.03.2014 թ թիվ 87-Ն հրաման,<br>- ՍՆիՊ 2.08.02-89 «Հասարակական շենքեր և շինություններ (այդ թվում <Актуализированная редакция СНиП 2.08.02-89>)»<br>- ՀՀ կառավարության 13.12.2007 թ <«ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001 թ N 532 և 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1490-Ն |

| | | |
|---|---|---|
| | | որոշում,<br>- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018 թ «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» թիվ 43-Ա հրաման,<br>- ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյմակայուն շինարարության նախագծման նորմեր»,<br>- «Պատմության և մշակույթի հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք,<br>- ՀՕ-110-Ն 21.06.2014թ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք,<br>- ՀՀ կառավարության 04.05.2017 թ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման կարգ,<br>- ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»: |
| 3 | Նախագծման փուլերը | **Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝**<br>ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017 թ N 128-Ն հրամանի համաձայն.<br>Նախագծային աշխատանքների իրականացում «Աշխատանքային Նախագիծ» 1 (մեկ) փուլով |
| 4 | Նախագծի կազմը | **«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ»**<br>**<u>Նախագծի լրակազմում նախատեսվող (մշակվող) փաստաթղթեր</u>**<br>1. Ընդհանուր բացատրագիր<br>2. Ճարտարապետաշինարարական մաս (գծագրական և տեքստային նյութեր)<br>- Ճարտարապետական լուծումներ<br>- Կոնստրուկտիվ լուծումներ<br>3. Ինժեներական (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր)՝<br>- էլմատակարարման, կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության, ջեռուցման, օդամատակարարման, գազամատակարարման համակարգեր, կապի ցանցեր, տեսահսկման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման և այլն *(նախագծողի կողմից անհրաժեշտ համարվող այլ համակարգերի նախատեսում)*<br>4. Շինարարական աշխատանքների նախահաշիվ<br>5. Շինարարության կազմակերպման նախագիծ<br>6. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ<br>7. Հաշմանդամների համար օբյեկտի մատչելիությունն ապահովող միջոցառումներ<br>8. Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ<br>Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝<br>9.Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ) |
| 5 | Այլ պահանջներ | **Համաձայնեցումներ**<br>- Երևան քաղաքի ավագ դպրոցների դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի, մարզերի ավագ դպրոցների դեպքում՝ համապատասխան համայնքների ղեկավարների,<br>- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի,<br>- ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի,<br>ինչպես նաև ըստ անհրաժեշտության<br>- ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ, *ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով (կամ տարածական պլանավորման այլ փաստաթղթերով) սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական ցուցանիշների, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման եկարագրի (գործոնների) առկայությամբ*<br>Նախագծի համաձայնեցում ոլորտի գլխավոր կարգադրիչ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ:<br>**Եզրակացություններ**<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում.<br>- Նախագծողի կողմից ինժեներաերկրաբանական հետազոտության եզրակացությունների և տեխնիկական պայմանների ձեռքբերում, ընդ որում ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները պետք է իրականացվեն հորատման և գրունտների լաբորատոր փորձարկման միջոցով՝ համաձայն |

| | | |
|---|---|---|
| | | գործող նորմերի<br>- Նախագծողի կողմից գոյություն ունեցող մասնաշենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացության ձեռքբերում, և նախագծային լուծումների ընտրության տեխնիկատնտեսական հիմնավորում<br>**Փորձաքննություններ**<br>- որպես բարձր ռիսկայնության (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում քաղաքաշինական փորձաքննության եզրակացության ձեռքբերում՝ **Նախագծողի կողմից**<br>**Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ**<br>- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ<br>- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ<br>- էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ<br>Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները:<br>**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br>Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում:<br>**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ**<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, երկլեզու՝ հայերեն և ռուսերեն:<br>**ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ**<br>- Բոլոր վերոնշյալ կրթական օբյեկտների ծավալաթերթ-նախահաշիվները, ինչպես նաև ամփոփ նախահաշիվները ներկայացնել առանձին-առանձին:<br>- Ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը: |

*Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ն. Հարությունյան
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

---------- Գ. Փոքրիկյան
/ստորագրություն/

*Հավելված N2*
*«10» «10» 2019թ. կնքված*
*ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/10 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին «Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում» ծրագրի 5134 հոդվածից՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | |
| | | | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Դեկտեմբեր մինչև 30-ը | Ընդամենը |
| 1 | 71241200/3 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | - | 7500000 | 7500000 | 7500000 | 7500000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով։*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Հ. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Գ. Փոքրիկյան
/ստորագրություն/ Կ.Տ